«ԱՊԱԳԱ ՇԱԽՄԱՏԻՍՏ»

ՇԱԽՄԱՏ ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

2023-2024 ուստարի

ՇԱԲԱԹԱԿԱՆ 2 ԺԱՄ՝ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 3-6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԻ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՐԻՑՅԱՆ

ՆՊԱՏԱԿ

- Զարգացնել սովորողների այլընտրանքային մտածողությունը, կենտրոնացումը, իրավիճակը գնահատելու հմտությունները,
- Բարելավել շախմատային գիտելիքների խորացումը և խաղային որակները,
- Նպաստել դպրոցականների ունակությունների զարգացմանը,
- Բացահայտել շախմատային օժտվածությամբ սաների,
- Նպաստել շախմատ խաղի զարգացմանը:

ԽՆԴԻՐՆԵՐ

- Ինչպես վարվել ծանր իրավիճակներում,
- Նոր մտքեր և գաղափարներ առաջադրել քննարկման արդյունքում,
- Վերլուծել ստացած տեղեկությունը՝ համադրելով սեփական կարծիքը,
- Զարգացնել իրավիճակը գնահատելու, ճիշտ որոշումներ կայացնելու հմտություններ,
- Յուրաքանչյուր սովորողի համար հասանելիության ապահովում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Կամրապնդեն գործնական խաղերի միջոցով ստացած գիտելիքները,
- Կձևավորեն մտածված, ինքնուրույն որոշումներ ընդունելու, հույզերը կառավարելու հմտություններ,
- Կգնահատեն արդար խաղն ու ազնվությունը,
- Կկիրառեն ստացած գիտելիքները գործնականում՝ մասնակցելով դպրոցական, տարածաշրջանային, մարզային օլիմպիադաներին, կարգային մրցաշարերին,
- Կկարողանան կայացնել ինքնուրույն որոշումներ,
- Կգիտակցեն համագործակցված աշխատանքի կարևորությունը,
- Ձեռք կբերեն սեփական մտածելակերպի և կարողությունների նկատմամբ վստահություն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծանոթանալ տարբեր կոմբինացիաների, ծուղակների դեպքում արագ կողմնորոշվել, իրավիճակը ճիշտ գնահատել, կազմել խաղի պլան, գնահատել մրցակցի և սեփական դիրքերը: Հասնել նյութական առավելության բաց և կիսաբաց գծերում, թույլ դաշտերում: Օգտագործել արգելափակում, կիրառել պաշտպանի ոչնչացում, հարձակում, մարտավարական և ռազմավարական այլ հնարքներ, հասնել շահած դրության:

N	ԹԵՄԱՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՏԿԱՑՎՈՂ ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	Խաղի սկզբունքները	2
2	Արքայական գամբիտ	1
3	Թագուհու գամբիտ	1
4	Սկանդինավյան պաշտպանություն	1
5	Սիցիլիական պաշտպանություն	1
6	Կարո-Կանի պաշտպանություն	1
7	Գործնական խաղ	3
8	Երկքայլանի մատային խնդիրներ	2
9	Թունավոր թագուհի	1
10	Թագուհիով գրոհ	1
11	Թագուհիով և ձիով գրոհ	1
12	Մատ նավակով և թագուհիով	1
13	Մատային ծուղակներ	1
14	Գործնական խաղ	1
15	Երկքայլանի մատային խնդիրներ	1
16	Մատային գրոհ վերջին հորիզոնականով	1
17	7-րդ և 2-րդ հորիզոնականներ, թույլ դաշտեր	1
18	Թուլություն վերջին հորիզոնականում	1
19	Գործնական խաղ	1
20	Երկքայլանի մատային խնդիրներ	1
21	Գրոհ տարակողմ և անբավարար փոխատեղումների դեպքում	1
22	Խորամանկ թակարդներ	2
23	Սխալներ և ծուղակներ	2
24	Զոհաբերությունը հասցնում է հաղթանակի	1
25	Գործնական խաղ	2
26	Եռաքայլ մատային խնդիրներ	1
27	Պաշտպանության վերացման կոմբինացիա	1

N	ԹԵՄԱՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՏԿԱՑՎՈՂ ԺԱՄԵՐԻ ՔԱՆԱԿԸ
28	Մեկուսացում և փակում, դաշտի գրավում	1
29	Փրկել խաղը պարտադրելով ոչ ոքի	1
30	Գործնական խաղ	1
31	Եռաքայլ մատային խնդիրներ	1
32	Գրոհ կենտրոնում գտնվող արքայի դեմ	1
33	Դիրքային խաղի տարրերը	1
34	Դիրքային առավելություն	1
35	Զինվորների դիրքը, զինվորային թուլություններ,թույլ դաշտեր	1
36	Զինվորային վերջնախաղեր	1
37	Խաբուսիկ քառակուսի, եռանկյան կանոն	1
38	Հեռավոր անցունակ զինվոր	1
39	Պաշտպանված անցունակ զինվոր	1
40	Զինվորային ճեղքում	1
41	Շրջափակված զինվոր	1
42	Տարբեր թևերում առկա զինվորներ	1
43	Գործնական խաղ	1
44	Առաջադրանքներ. Հասնել հաղթանակի	1
45	Վերլուծություն հայ շախմատիստների պարտիաներից	1
46	Առաջադրանքներ. Մատային խնդիրներ	1
47	Գործնական խաղ	2
48	Բաց սկզբնախաղեր	1
49	Փակ սկզբնախաղեր	1
50	Կիսաբաց սկզբնախաղեր	1
51	Կործանում սկզբնախաղում	1
52	Դեբյուտային 5 թակարդներ	2
53	Առաջադրանքներ. Հասնել հաղթանակի	3
54	Գործնական խաղ	4

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 68 ԺԱՄ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- <<Ուսուցչի ձեռնարկ>> Հ. Թումանյան
- <<Ուսումնական ձեռնարկ նախասիրական պարապմունքների համար>> Հ. Թումանյան
- <<Շախմատային ստեղծագործություն>> Թ. Դավթյան
- <<Սովորում ենք շախմատ խաղալ>> Թ. Դավթյան
- <<Սպասողական քայլ>> Է. Կոստանյան, Ա. Չարչյան

Շախմատը ձևով խաղ է, բովանդակությամբ՝արվեստ, տիրապետելու դժվարությամբ՝ գիտություն:
Շախմատը կարող է այնքան ուրախություն պատճառել, որքան լավ գիրքը կամ երաժշտությունը:

Տիգրան Պետրոսյան